



Կ Ա Ջ Մ Կ Ո Մ Ի Տ Ե



ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Նվիրված Արցախի անկախության 20-ամյակին



17-19 հոկտեմբերի 2008թ.

Ստեփանակերտ, ԼՂՀ

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Խորհրդային միության փլուզումից հետո, ուղեղների արտահոսքի հետևանքով, Հայաստանը կորցրեց իր ազգային գիտական ներուժի զգալի մասը: Այն իր բացասական ազդեցությունը թողեց հատկապես Կենսագիտության բնագավառի վրա, որը ունի առանցքային դեր հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գործում: Բնագավառի ներկայիս ձգնաժամային վիճակը պայմանավորված է նաև նրանով, որ, մինչ օրս, չի փաստագրված հանրապետությունում առկա գիտատեխնիկական ներուժը, չի որոշված հանրապետության համար Կենսագիտության գերակա ուղղությունները և չի ստեղծված կառույց, որը իվիճակի կլինի ինտեգրացնել համազգային գիտատեխնիկական ներուժը՝ ի շահ Հայաստանում Կենսագիտության բնագավառի զարգացման:

Հաշվի առնելով ժամանակակից կիրառական Կենսագիտության առանցքային նշանակությունը առողջապահության, գյուղատնտեսության, կենսատեխնոլոգիայի, բնապահպանության և այլ կարևոր բնագավառների զարգացման գործում և համազգային ներուժի ինտեգրացման խիստ անհրաժեշտությունը հանրապետությունում այն ժամանակակից մակարդակով զարգացնելու համար, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Բժշկականաբանության ամբիոն- “Բժշկականաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն” ՊՈԱԿ-ը, ԼՂՀ Կառավարության և “Համահայկական Գիտական Խորհուրդ” Հ.Կ.-ի հետ համատեղ, նախաձեռնել է 2008թ. հոկտոմբերին ք. Ստեփանակերտում (ԼՂՀ) անցկացնել Կենսաբանների Համահայկական Համաժողով՝ նվիրված Արցախի անկախության 20-ամյակին: Համաժողովի նպատակն է, համազգային ներուժի ինտեգրացմամբ, աջակցել Հայաստանի և Արցախի համար խիստ ռազմավարական նշանակություն ունեցող կիրառական կենսաբանության բնագավառի զարգացմանը:

Համաժողովին արտասահմանյան գիտնականների լայն մասնակցություն ապահովելու նպատակով, համագումարից անմիջապես հետո երևանում կկայանա ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կենսագիտության կոնֆերանս՝ նվիրված Վիկտոր Համբարձումյանի ծննդյան 100-ամյակին, որի շրջանակներում կկազմակերպվեն երեք միջազգային գիտաժողովներ /տես Կենտրոնի ինտերնետային կայքը՝ www.biophys.am/

Organizing Committee

Address: 31 Acharyan St., Yerevan, 0040, Armenia
Tel: (374 10) 624170/612461; Fax: (374 10) 624170
Web page: <http://www.biophys.am> E-mail: info@biophys.am